Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2023-2024 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. ՀՀ տարածքում ֆոտովոլտայիկ (արևային) էներգետիկայի ներուժը ամենափոքրն է Լոռու և Տավուշի մարզերում

բ. ՀՀ տարածքում ֆոտովոլտայիկ (արևային) էներգետիկայի ներուժը Աշոցքի սարահարթում Շիրակի դաշտի համեմատ ավելի մեծ է

գ. ՀՀ տարածքում ֆոտովոլտայիկ (արևային) էներգետիկայի ներուժը Արագածի հյուսիսահայաց լանջերին հարավահայաց լանջերի համեմատ ավելի մեծ է

դ. ՀՀ տարածքում հողմային էներգետիկայի ներուժը առավելագույնին է հասնում խոշոր գետահովիտներում

ե. Հարավային կիսագնդի սավանաների և նոսրանտառների զոնայում հրդեհների հավանականությունը մեծ է դեկտեմբեր-փետրվարին

զ. Հյուսիսային կիսագնդի տունդրայի զոնայում դեկտեմբերից փետրվար ժամանակահատվածում գերակշռում են արկտիկական օդային զանգվածները

է. Հասարակածային խոնավ մշտադալար անտառների զոնայի կարմրադեղին հողերը հարուստ են հումուսով

ը. Հարավային կիսագնդում, հյուսիսայինի համեմատ, անապատների և կիսաանապատների զոնան ավելի մեծ մակերես է զբաղեցնում

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը 1միավոր

ա. քաղաքային ջերմային կղզի բ. բաթոլիտ

3. Բնութագրով որոշել երևույթը կամ ձևավորվող ռելիեֆի միավորի անվանումը 1միավոր

Այս երևույթն ու համապատասխան ռելիեֆի ձևը առաջանում է քիմիական հողմահարման արդյունքում, երբ ջրի ներգործությամբ լուծվող ապարների (օր.՝ կրաքարի և դոլոմիտի) քայքայման հետևանքով երկրակեղևում ձևավորվում են խոռոչներ և անձավներ:

4. Ինչպե՞ս են կոչվում.

ա. Լեռներից փչող տաք ու չոր պոռթկուն քամիները, որոնք հաճախ հանգեցնում են կտրուկ ձնհալքի և գետերի վարարման: Հանդիպում են նաև Հայաստանում 1միավոր

բ. Մեկ կենտրոնից կամ երկրից մշակույթի տարբեր բաղադրիչների՝ լեզվի, կրոնի, կենսակերպի և այլն, դեպի այլ՝ տնտեսական և քաղաքական առումներով հաճախ ենթակա երկրներ տարածումը: Հաճախ այն հարկադիր է: 1միավոր

5. Խնդիրներ

ա. Լիճը սնվում է միայն գետից, որի ծախսը 40մ³/վրկ է: Այդ ներհոսքի 50%-ը ուղղվում է արդյունաբերական ջրօգտագործմանը, իսկ մնացածը՝ որպես խմելու ջուր կարող է մատակարարվել մոտակա քաղաք: Որքա՞ն կարող է կազմել այդ քաղաքի առավելագույն բնակչության թիվը, եթե օրական մեկ բնակչի ջրապահանջը 1մ³ է, իսկ բնակչության թիվը չի կարող ավել լինել, քան թույլ է տալիս ջրային ռեսուրսը: 1միավոր

բ. Երկրի բնակչության թիվը տարեսկզբին 8մլն մարդ էր: Այդ տարվա ընթացքում ծնվել է 80 000 երեխա և մահացել է 60 000 մարդ: Որքա՞ն է կազմել բնակչության բացարձակ աճը և վերարտադրության ո՞ր տիպին է պատկանում երկիրը: 1միավոր

6. Ելնելով ՄԱԿ-ի պաշտոնական տեղեկագրի տվյալներից՝ գծեք աշխարհի բնակչության սեռատարիքային բուրգը (1միավոր) և պատասխանեք հարցերին:

Տարիք	0-9	10-19	20-29	30-39	40-49	50-59	60-69	70-79	80+
Տղամարդ%	17.0	16.7	15.3	14.9	12.5	10.8	7.4	4.0	1.5
Կին%	16.3	15.8	14.5	14.4	12.3	11.0	8.2	4.9	2.5

ա. Ինչպիսի՞ն է բնակչության թվի շարժի միտումը առաջիկա տասնամյակներին 1միավոր
բ. Ինչու՞ է 50+ տարիքային խմբում կանանց բաժինը գերակշռում տղամարդկանց նկատմամբ: Նշել 4 պատճառ 1միավոր

7. Դասավորել նշված երկրները ըստ աշխատուժի՝ գյուղատնտեսության ոլորտում ներգրավվածության բաժնի աճող հաջորդականության. Եթովպիա, Ավստրալիա, Բելգիա, Բանգլադեշ 1միավոր

8. Բացատրել
ա. Ինչու՞ են Չինաստանի իշխանությունները վերջին տարիներին զգալիորեն մեղմում երկրի ժողովրդագրական քաղաքականությունը: Ներկայացնել երկու հիմնական պատճառ 1 միավոր
բ. Չնայած արեգակնային առավելագույն ճառագայթումը բաժին է ընկնում հասարակածային գոտուն, սակայն առավելագույն գրանցված ջերմաստիճանները արևադարձային գոտում են: Ինչու՞ 1միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին
Մեծ Բրիտանիայում (ՄԲ) էներգիայի տարբեր աղբյուրների բաժինը (%) էներգետիկայում 1966-2022թթ. ժամանակահատվածում



ա. Ո՞ր աղբյուրի դերն է ամենաշատը նվազել ՄԲ էներգետիկայի կառուցվածքում ամբողջ ժամանակահատվածում (0.25միավոր) և որի՞ դերն է ամենաշատը ավելացել (0.25միավոր)
բ. Ինչո՞վ է պայմանավորված էներգիայի համապատասխան աղբյուրի նման անկումը (նշել երկու հիմնական պատճառ՝ յուր. 0.25միավոր) ու համապատասխան աղբյուրի նման աճը (նշել երկու հիմնական պատճառ, յուր. 0.25միավոր)
գ. Ո՞րն է վերականգնվող էներգետիկայի առաջատար ճյուղը Մեծ Բրիտանիայում (0.5միավոր)

10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները
ա. Ժամը քանիսին է Հայաստանում դիտվում արևի ամենաբարձր հորիզոնական դիրքը օրվա ընթացքում և ինչու՞ 1միավոր
բ. Կրակային երկրագործությունը տարածված է ինչպես Սահելի գոտում, այնպես էլ Ամազոնիայում: Սակայն, ի տարբերություն Սահելի գոտու, դրա հետևանքով Ամազոնիայում անապատացման երևույթները ավելի սակավ են: Ինչու՞ 1միավոր

11. Համապատասխանեցնել մշակաբույսերը իրենց ծագման արեալներին (օր.՝ Ա-1) 2միավոր
Ա. Սև պղպեղ; **Բ.** Սուրճ; **Գ.** Սխտոր; **Դ.** Նարինջ;
Ե. Եգիպտացորեն; **Զ.** Ուրց; **Է.** Լոբի; **Ը.** Նուռ

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան